600.0327.08.08.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2018 թվականի №327Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի №704Ա ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի №116Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Սուրեն Երեմյանի 2018 թվականի հուլիսի 27-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
    1) 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Անհատ ձեռնարկատեր Սուրեն Երեմյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №704Ա որոշումը,
    2) 2016 թվականի մայիսի 11-ի «Անհատ ձեռնարկատեր Սուրեն Երեմյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №116Ա որոշումը:

2. Անհատ ձեռնարկատեր Սուրեն Երեմյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 27-ը հաշվարկված 28 261 (քսանութ հազար երկու հարյուր վաթսունմեկ) դրամ պարտքը:
3. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատեր Սուրեն Երեմյանն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Սուրեն Երեմյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
8 օգոստոսի 2018թ.